# ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-16/3-020

ք. Երևան << 16 >><< 12 >> 2016թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Թովմասյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մուրան>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Շախմուրադյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է 2015 թվականի մարտի 5-ի կնքված թիվ ՀՀ ԱԺ ՇՀԱՊՁԲ-11/21-2015 պայմանագրի հավելված 1-ով <<Տեխնիկական բնութագիր>> նախատեսված ավտոմեքենաների սպասարկման ծառայությունների մատուցման ապահովման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 2600000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են պայմանագրի կնքման օրվանից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3,1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած 'հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԺ աշխատակազմ | <<Մուրան>> ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՎՀՀ 00008519 | ք. Երևան, Տիգրանյան 1, փակ 1 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ՀՎՀՀ 00084235 |
| Հ/Հ 900011020089 | Հ/Հ 205002215676-1001 |
| ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար՝ | Գլխավոր տնօրեն |
| Հ. Թովմասյան | Ա. Շախմուրադյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 1
<< 16 >><< 12 >> 2016թ.կնքված
N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-16/3-020 ծածկագրով
գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/հ | Ձեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|---|
| 1* | Nissan Sentra MY 2015, NissanX-Trail PY 2015 և Renault dokker՝ թվով 8 ավտոմեքենաների ընթացիկ տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| սկիզբը | ավարտը |
| պայմանագրի կնքման օրվանից | 30.12.2016թ. |

*Մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Հավելված 1.1-ում

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020089**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար**
**Հ. Թովմասյան**

_______________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**<<Մուրան>> ՍՊԸ**
**Ինեկոբանկ ՓԲԸ**
**ք. Երևան, Տիգրանյան 1, փակ 1**
**ՀՎՀՀ 00084235**
**Հ/Հ 205002215676-1001**
**Գլխավոր տնօրեն**
**Ա. Շախմուրադյան**

_______________________
(ստորագրություն)
Կ.Տ

| Ձեռքբերվող ծառայության նկարագիր | | | |
|---|---|---|---|
| NN | SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները | Չափաբաժին 1 | Չափաբաժին 2 |
| | | 5-տեղանոց մարդատար աոջևի տանող ա/մ | 4x4 տիպի ա/մ |
| 1 | 2 | 3 | 4 |
| | SU-1 ներառվող ծառայությունների անվանումը | Այլ պետությունների արտադրության ա/մ | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 5000 | 5000 |
| 2 | Սառեցման համակարգի ստուգում | 500 | 500 |
| 3 | Յուղման համակարգի ստուգում | 0 | 0 |
| 4 | Արտածման համակարգի ստուգում | 0 | 0 |
| 5 | Կցորդման համակարգի ստուգում | 0 | 0 |
| 6 | ՓՏ-ի աշխատանքի ստուգում | 0 | 0 |
| 7 | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | 0 | 0 |
| 8 | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում | 0 | 0 |
| 9 | Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | 0 | 0 |
| 10 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 3000 | 3000 |
| 11 | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | 2000 | 2000 |
| 12 | ABS համակարգի ստուգում | 0 | 0 |
| 13 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 3000 | 3000 |
| 14 | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | 0 | 0 |
| 15 | Թափքի վիճակի ստուգում | 0 | 0 |
| 16 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների | 1000 | 1000 |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանումը** | | |
| 17 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 8000 | 10000 |
| 18 | Կարտերի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| | **2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 19 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 3000 | 3000 |
| 20 | Ղեկավարման բոլկի վերանորոգում | 30000 | 30000 |
| 21 | Օդի զտիչի փոխարինում | 2000 | 2000 |
| 22 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 12000 | 12000 |
| 23 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 24000 | 24000 |
| 24 | Բենզամղիչի փոխարինում | 15000 | 15000 |
| 25 | Վառելիքի զտիչի փոխարինում | 2000 | 2000 |
| 26 | վառելիքի բաքի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | |
| 27 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 28 | Հովհարի  հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 29 | Ռադիատորի հանում և տեղադրում | 15000 | 15000 |
| 30 | Ռադիատորի վերանորոգում | 50000 | 50000 |
| 31 | Թերմոստատի փոխարինում | 8000 | 8000 |
| 32 | Ջրի պոմպի փոխարինում | 15000 | 15000 |
| 33 | Ընդարձակող բաքի փոխարինում | 2000 | 2000 |
| 34 | Խլարարի հանում և տեղադրում | 6000 | 6000 |
| 35 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 3000 | 3000 |
| | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | |
| 36 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 80000 | 80000 |
| 37 | ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում | 15000 | 15000 |
| | **5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | |
| 38 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | [redacted] | 60000 |
| 39 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | | 8000 |
| 40 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | | 10000 |
| 41 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | | 8000 |
| 42 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում | | 5000 |
| | **6. Կախոց** | | |
| 43 | Տրավերսի հանում և տեղադրում | 30000 | 35000 |
| 44 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| 45 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 10000 | 10000 |
| 46 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 7000 | 7000 |
| 47 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 1000 | 1000 |
| 48 | Զսպանակի հանում և տեղադրում | 2000 | 2000 |
| 49 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 50 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 8000 | 8000 |

| | | | |
|---|---|---|---|
| 51 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 2000 | 2000 |
| 52 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 4000 | 4000 |
| 53 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 4000 | 4000 |
| 54 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 2000 | 2000 |
| 55 | Գնդե հոդակապերի փոխարինում | 3000 | 3000 |
| 56 | Ծայրակալների հանում և տեղադրում | 3000 | 3000 |
| 57 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 2000 | 2000 |
| 58 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 6000 | 6000 |
| 59 | Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում | 500 | 500 |
| 60 | Հետևի զսպանակի փոխարինում | 4000 | 4000 |
| 61 | Հետևի ձնցամեղմիչի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 62 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 1000 | 1000 |
| 63 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 3000 | 3000 |
| 64 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | 2000 | [redacted] |
| 65 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | 3000 | |
| 66 | Անվաբազի կարգավորում | 6000 | 12000 |
| 67 | Ջրման աշխատանքներ 1 քառ.սմ համար | 500 | 500 |
| | **7.Ղեկային մեխանիզմ** | | |
| 68 | Ղեկային կայունի հանում և տեղադրում | 30000 | 30000 |
| 69 | Ղեկային կայունի վերանորոգում | 60000 | 60000 |
| | **8. Արգելակային համակարգ** | | |
| 70 | Գլխ.գլանի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 71 | Գլխ. գլանի վերանորոգում | 1000 | 1000 |
| 72 | Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում | 8000 | 8000 |
| 73 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | 2000 | 2000 |
| 74 | Բանվ. գլանի վերանորոգում | 1000 | 1000 |
| 75 | Արգելակային համակարգի օդահանում | 5000 | 5000 |
| 76 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 77 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 78 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 500 | 500 |
| 79 | Հետևի սուպպորտի վերանորոգում | 500 | 500 |
| 80 | Արգելակային փոխրակի փոխարինում | 3000 | 3000 |
| 81 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 4000 | 4000 |
| 82 | Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում | [redacted] | 4000 |
| 83 | Հետևի կոճղակների փոխարինում | 8000 | [redacted] |
| 84 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 4000 | 4000 |
| 85 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 4000 | 4000 |
| 86 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | 1000 | 1000 |
| 87 | ABS-ի հանում և տեղադրում | 10000 | 10000 |
| 88 | ABS-ի վերանորոգում | 10000 | 10000 |
| 89 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 90 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում | 1000 | 1000 |
| | **9.Էլեկտրասարքավորում** | | |
| 91 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 10000 | 10000 |
| 92 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 93 | Գեներատորի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 94 | Գեներատորի վերանորոգում | 10000 | 10000 |
| 95 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 96 | Մեկնարկիչի վերանորոգում | 10000 | 10000 |
| 97 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | 2000 | 2000 |
| 98 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | 1000 | 1000 |
| 99 | Բռնկման կոճակի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 100 | Վազքաչափի հանում և տեղադրում | 3000 | 3000 |
| 101 | Սարքերի վահանի հանում և տեղադրում | 35000 | 35000 |
| 102 | Ազդանշանի հանում և տեղադրում | 2000 | 2000 |
| 103 | Ապակեմաքրիչի շարժիչի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 104 | Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում | 5000 | 5000 |
| 105 | Ազդանշանային համակարգի տեղադրում | 15000 | 15000 |
| 106 | Մագնիտոլային տեղադրում | 5000 | 5000 |
| 107 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | 1000 | 1000 |
| 108 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում | 10000 | 10000 |
| 109 | Էլ/հաղորդալարերի հիմնական խրցի հանում և տեղադրում | 30000 | 30000 |
| 110 | Էլ/հաղորդալարերի երկրորդային խրցի հանում և տեղադրում | 20000 | 20000 |
| 111 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 3000 | 3000 |
| 112 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 2000 | 2000 |
| 113 | Վառոցքի մոմերի փոխարինում | 5000 | 5000 |
| 114 | Կոնդիցիոների լիցքավորում | 15000 | 15000 |
| 115 | Կոնդիցիոների վերանորոգում | 10000 | 10000 |
| | **10. Այլ ծառայություններ** | | |
| 116 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար | 3000 | 3000 |
| 117 | Անիվի հանում և տեղադրում | 500 | 500 |
| 118 | Անվադողերի վերանորոգում | 1000 | 1000 |
| 119 | Անիվի բալանսավորում | 1000 | 1000 |
| 120 | CO-գործման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար | 1000 | 1000 |
| 121 | Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար | 8000 | 8000 |
| 122 | Փականագործի աշխատանքներ, գին 1ժ համար | 8000 | 8000 |

| | | | |
|---|---|---|---|
| 123 | Քարշակի ծառայություն գին 1կմ. համար | 500 | 500 |
| | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | **5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ** | **4x4 տիպի ավտոմեքենաներ** |
| | **1. Շարժիչ** | Այլ պետությունների արտադրության ա/մ | |
| 1 | Բարձիկ | 45600 | 42000 |
| 2 | Կարտերի միջադիր | 1200 | 1200 |
| 3 | Կարտեր | 66000 | 72000 |
| 4 | Միջադիր | 4800 | 3600 |
| | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 5 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր | 4800 | 4800 |
| 6 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր | 7200 | 7200 |
| 7 | Յուղի զտիչ | 4800 | 4800 |
| 8 | Վառոցքի մոմ | 6600 | 6600 |
| 9 | Ինժեկտորի ֆորսունկա | 72000 | 72000 |
| 10 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 108000 | 180000 |
| 11 | Վառելանյութի զտիչ | 7200 | 7200 |
| 12 | Վառելանյութի զտիչի նուրբ մաքրման | 12000 | 12000 |
| 13 | Վառելանյութի փողրակ | 7200 | 7200 |
| 14 | Օդի զտիչ | 9600 | 13200 |
| 15 | Սրահի օդի զտիչ | 16800 | 16800 |
| 16 | Ջերմաստիճանային տվիչ | 3600 | 3600 |
| 17 | Յուղի տվիչ | 31200 | 31200 |
| 18 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 7200 | 7200 |
| 19 | Օդի ծախսի տվիչ | 66000 | 36000 |
| 20 | Արագաչափի տվիչ | 72000 | 72000 |
| 21 | Հովհարի տվիչ | 54000 | 54000 |
| 22 | Ջրի տվիչ | 16800 | 20400 |
| 23 | Բենզոբաքի տվիչ | 60000 | 66000 |
| 24 | Ղեկավարման համակարգիչ | 240000 | 240000 |
| 25 | Պարապ ընթացքի տվիչ | 1200 | 1200 |
| 26 | Դրոսելային փականի տվիչ | 6000 | 6000 |
| 27 | Դրոսելային կափույր | 174000 | 174000 |
| 28 | Թթվածնի տվիչ | 45600 | 54000 |
| | **3. Սառեցման և արտածման համակարգ** | | |
| 29 | Հովհար | 36000 | 30000 |
| 30 | Ռադիատոր | 108000 | 138000 |
| 31 | Ընդարձակող բաք | 36000 | 36000 |
| 32 | Ռադիատորի փողրակ | 6000 | 6000 |
| 33 | Թերմոստատ | 12000 | 12000 |
| 34 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 3960 | 3960 |
| 35 | Հուրվակ | 12000 | 12000 |
| 36 | Փոկ | 16800 | 12000 |
| 37 | Ծորակ | 12000 | 12000 |
| 38 | Խլարարի ներդիր | 3600 | 3600 |
| 39 | Խլարարի կախոց | 6000 | 6000 |
| 40 | Կռոնշտեյն | 6000 | 6000 |
| 41 | Անուր (Խամուտ) | 600 | 600 |
| 42 | Խլարար | 144000 | 144000 |
| 43 | Վառարանի ռադիատոր | 240000 | 114000 |
| | **4,Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | |
| 44 | ՓՏ-ի առջևի խցուկ | 6000 | 6000 |
| 45 | ՓՏ-ի հետևի խցուկ | 7200 | 6000 |
| 46 | ԱՓՏ-ի զտիչ | 6000 | 6000 |
| 47 | ԱՓՏ յուղ, 1 լիտր | 9600 | 9600 |
| 48 | Հերմետիկ | 3000 | 3000 |
| | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | |
| 49 | Բաշխիչ տուփի խցուկ | 120 | 6000 |
| 50 | Կարդանային լիսեռ | [redacted] | 300000 |
| 51 | Էլաստիկ մուֆտա | | 42000 |
| 52 | Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ | | 72000 |
| 53 | Կարդանային լիսեռի խաչուկի | | 30000 |
| | **6. Կախոց** | | |
| 54 | Տրավերս | 264000 | 324000 |
| 55 | Կռոնշտեյն | 1200 | 1200 |
| 56 | Ձախ կամ աջ հողակալ | 90000 | 105600 |
| 57 | Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոց | 18000 | 18000 |
| 58 | Անվակունդ | 156000 | 132000 |
| 59 | Անվակունդի խցուկ | 7200 | 7200 |
| 60 | Անվակունդի ներքին առանցքակալ | 30000 | 30000 |
| 61 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 30000 | 30000 |
| 62 | Ձախ կամ աջ հեղակալի խցուկ | 8400 | 8400 |
| 63 | Հարվածամեղմիչի թասակ | 26400 | 30000 |
| 64 | Զսպանակ | 84000 | 78000 |
| 65 | Առջևի հարվածամեղմիչ | 126000 | 114000 |

| | | | |
|---|---|---|---|
| 66 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | 16800 | 14400 |
| 67 | Հարվածամեղմիչի վռան | 6000 | 6000 |
| 68 | Ներքևի լծակ | 72000 | 72000 |
| 69 | Ներքևի լծակի վռան | 18000 | 18000 |
| 70 | Վերևի լծակ | 48000 | 48000 |
| 71 | Վերևի լծակի վռան | 18000 | 18000 |
| 72 | Գնդե հոդակապ | 24000 | 24000 |
| 73 | Առջևի կայունարար | 108000 | 114000 |
| 74 | Առջևի կայունարարի վռան | 3600 | 4800 |
| 75 | Առջևի կայունարարի առջևի վռան | 2400 | 2400 |
| 76 | Հետևի զսպանակ | 9000 | 8400 |
| 77 | Հետևի ցնցամեղմիչ | 54000 | 54000 |
| 78 | Հետևի մետաղաձող (շտանգա) | 9600 | 9600 |
| 79 | Հետևի մետաղաձող (շտանգա) վռան | 7200 | 7200 |
| 80 | Հետևի անկյունագծային լծակ | 1200 | 1200 |
| 81 | Անկյունագծային լծակի վռան | 5760 | 5760 |
| 82 | Աջ կամ ձախ ձգան | 21600 | 28800 |
| 83 | Ծայրակալ | 28800 | 38400 |
| 84 | Անվահեծ | 57600 | 57600 |
| | **7. Ղեկային մեխանիզմ** | | |
| 85 | Ղեկային կայուն | 360000 | 360000 |
| 86 | Ղեկային կայունի առանցքակալ | 1200 | 1200 |
| 87 | Ղեկային կայունի խաչուկ | 30000 | 30000 |
| 88 | Հիդրոուժեղարար | 60000 | 72000 |
| 89 | Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ | 10080 | 10080 |
| 90 | Հիդրոուժեղարարի պոմպ | 1200 | 1200 |
| 91 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 120 | 120 |
| 92 | Ղեկային ձող | 40800 | 36000 |
| 93 | Ղեկային ձողի ծայրակալ | 42000 | 42000 |
| 94 | Հիդրոուժեղարարի յուղ,  1 լիտր | 8400 | 8400 |
| | **8.Արգելակային համակարգ** | | |
| 95 | Գլխ. գլան | 102000 | 108000 |
| 96 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 2400 | 2400 |
| 97 | Վակուումային ուժեղարար | 480000 | 456000 |
| 98 | Բանվ. գլան | 45600 | 48000 |
| 99 | Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 2400 | 2400 |
| 100 | Արգելակային փողրակ | 16800 | 16800 |
| 101 | Սուպպորտի ուղղորդիչ | 3000 | 3000 |
| 102 | Սուպպորտի մանժետ | 120 | 120 |
| 103 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 39600 | 50400 |
| 104 | Հետևի կոճղակների կոմպլեկտ | 26400 | 28800 |
| 105 | Առջևի արգելակային սկավառակ | 96000 | 72000 |
| 106 | Հետևի արգելակային սկավառակ | 84000 | 60000 |
| 107 | Ձեռքի արգելակային ճոպան | 28800 | 30000 |
| 108 | ABS-ի տվիչ | 45600 | 54000 |
| 109 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | 1200 | 1200 |
| | **9. Էլեկտրասարքավորում** | | |
| 110 | Գեներատոր | 432000 | 540000 |
| 111 | Գեներատորի դիոդային կամրջակ | 28800 | 28800 |
| 112 | Գեներատորի ռելե | 9600 | 9600 |
| 113 | Գեներատորի առանցքակալ | 7200 | 7200 |
| 114 | Ստարտեր | 204000 | 240000 |
| 115 | Ստարտերի ռելե | 24000 | 24000 |
| 116 | Ստարտերի ածուխ | 30000 | 30000 |
| 117 | Բենդեքս | 24000 | 24000 |
| 118 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 96000 | 96000 |
| 119 | Առջևի լապտեր | 150000 | 180000 |
| 120 | Առջևի թարթիչ | 6000 | 6000 |
| 121 | Հետևի լապտեր | 60000 | 72000 |
| 122 | Հետևի թարթիչ | 6000 | 6000 |
| 123 | Արգելակային  լապտեր | 7200 | 7200 |
| 124 | Լամպ | 6000 | 6000 |
| 125 | Էլեկտրական անջատիչ | 6000 | 6000 |
| 126 | Էլեկտրական տվիչ | 30000 | 30000 |
| 127 | Էլեկտրական չափիչ սարք | 6000 | 6000 |
| 128 | Բռնկման կոճպեր | 36000 | 36000 |
| 129 | Էլեկտրալարերի երկրորդային խուրձ | 24000 | 24000 |
| 130 | Վառոցքային լարերի խուրձ | 7200 | 7200 |
| 131 | Վառոցքի մոմի ծայրակալ | 31200 | 36000 |
| 132 | Վազքաչափ | 180000 | 180000 |
| 133 | Արագաչափ | 2400 | 2400 |
| 134 | Ազդանշան | 48000 | 48000 |
| 135 | Ապակեմաքրիչ | 14400 | 14400 |
| 136 | Ապակեմաքրիչի շարժիչ | 21600 | 21600 |
| 137 | Դռների կենտրոնական փական | 60000 | 60000 |
| 138 | Ազդանշանային համակարգ | 30000 | 30000 |
| 139 | Մագնիտոլա | 30000 | 30000 |
| 140 | Էլեկտրամբարձիչ | 96000 | 96000 |

| | | | |
|---|---|---|---|
| 141 | Էլեկտրասամբարձիչի շարժիչ | 144000 | 144000 |
| 142 | Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար | 3600 | 3600 |

Հավելված 2
<< 16 >><< 12 >> 2016թ.կնքված
N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-16/3-020 ծածկագրով
գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ձեռքբերվող ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ եռամսյակի՝ ընդ որում | | | | |
|---|---|---|---|---|---|
| | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդամենը |
| Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | | | | 2600000 | 2600000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020089**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար**
**Հ. Թովմասյան**

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**<<Մուրան>> ՍՊԸ**
**Ինեկոբանկ ՓԲԸ**
**ք. Երևան, Տիգրանյան 1, փակ 1**
**ՀՎՀՀ 00084235**
**Հ/Հ 205002215676-1001**
**Գլխավոր տնօրեն**
**Ա. Ծախմուրադյան**

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
<< 16 >><< 12 >> 2016թ.կնքված
N ՀՀ ԱՃ-ԲԸԱՀԾՁԲ-16/3-020 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ
<<Մուրան>> ՍՊԸ
ք. Երևան, Տիգրանյան 1, փակ 1
ՀՎՀՀ 00084235
Հ/Հ 205002215676-1001

Պատվիրատու
ՀՀ ԱՃ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
Հ/Հ 900011020089

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________________

________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս __________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| 1 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

____________________________
ստորագրություն

____________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
<< 16 >><< 12 >> 2016թ.կնքված
N ՀՀ ԱԺ-ԲԸԱՀԾՁԲ-16/3-020 ծածկագրով
գնման պայմանագրի

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ------------------------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)

-----------------------------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N -------------

(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ----------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն